

«ՔՆԱՐ» ԵՒ «ԿՈՌԻՆԿ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐՈՒ ՅԱԶՈՂ ԵԼՈՅԹԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ



Ուրբաթ, 1 Մայիս 2009-ի երեկոյան, Դամասկոսի Հայ Կաթողիկէ Ամինեան սրահին մէջ կայացաւ «Կռունկ»-ը «Քնար» երգչախումբերու միացեալ ելոյթը: Համերգը կը հովանաւորէր ու իր ներկայութեամբ կը նախագահէր, Դամասկոսի Հ. Կ. առաջնորդ՝ Արիի. Յովսէփ Եպս. Առնաութեանը: Ներկայ էին նաեւ Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Արմաշ Եպս. Նալպաստեանը, երկու երգչախումբներուն հիմնադիրը, Պելրոլթէն մասնաւորապէս ժամանած՝ գերյարօժէի Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեանը, հայր Մովսէս Վրդ. Տոնաւանը, հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ Պատուելի Տաթէ. Պասմաճեանը, արժանապատիւ քահանայ հայրերը, Հայաստանի հանրապետութեան դեսպան տեր եւ տիկին տղթ. Արշակ Փոլատեանը եւ դեսպանատան նորանշանակ խորհրդակցական պրն. Տիգրան Երզնէանը, դամասկոսի միութիւններու եւ կրթական օժանդակներու ներկայացուցիչներ, արուեստագետներ ու բազմաթիւ երգի ու երաժշտութեան սիրահար հայորդիներ:

Սուրիոյ եւ Հայաստանի ազգային օրհներգները ունկնդրելէ ետք, բացման խօսքը կատարեց Դամասկոսի Հ.Կ.Մ.-ի ատենապետ՝ եւ «Քնար» երգչախումբի պատասխանատու պրն. Սարգիս Բէշիշեանը, որ նշեց թէ այս համերգը աննախընթաց է «Քնար» երգչախումբի երկար տարիներու գործունէութեան մէջ քանի ան առաջին անգամ միասնաբար ելոյթ պիտի ունենան Պելրոլթէի Հ.Կ. Պատրիարքական «Կռունկ» երգչախումբի հետ որ կը խմբավարէ բազմավաստակ երաժշտագետ տղթ. Եղարթ Թորիկեանը: Ան նշեց թէ Մայիս օրհնաբեր ամսուայ առաջ օրուան այս համերգը խնդրալից կը պատճառէ բոլորին ու ապացոյց է Հայ երգի յաղթանակին: Պրն. Բէշիշեանը մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց «Կռունկ» երգչախումբի անդամներուն, գլխաւորութեամբ հոգեւոր վարիչ Երյարթելի հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեանին եւ խմբավար տղթ. Եղարթ Թորիկեանին, որոնք յանձն առին օպ. Դամասկոս ու ճոխացնել այս ելոյթը: Ան յիշեցուց ներկաները թէ հայր Անդրանիկ 47 տարիներ առաջ Դամասկոսի մէջ հիմնած է «Քնար» երգչախումբը:

Այնուհետեւ առաջին բաժնով բեմ բարձրացան «Քնար» երգչախումբի 50 անդամները, որոնք խմբավարութեամբ Շանթ Բէշիշեանի ու դաշնակի ընկերակցութեամբ Աննա Բէշիշեանին, ներկաներուն հրամցուցին փունջ մը հայկական խմբերգներ: Յաջորդաբար կատարուեցան «Հագարաթէ Հայաստան», «Ատանայի ողբը», «Հիմի էլ լռեմք», «Ֆառազայ Սայաթ Նովայի երգերու հիման վրայ», «Իմ եղեգ», «Սատուսար», «Անաուտեան երեսն», «Վանի կոտորածը եւ Կարնոյ շարժումը» եւ «Հայկական բանակ» երգը որու մենթորի բաժնը մեծ յաջողութեամբ կատարեցին Յօրիկ Պոյաճեան, Մարիա Մարտիրոսեան, Ժոզէ Եւ ժան Բիեր Իսթեմետեաններ: Վերոնշեալ երգերու երաժշտութիւնը ու մշակումը կատարուած էին հայ ակնաւոր երաժիշտներու կողմէ ինչպէս Կոմիտաս Վրդ. որու ծննդեան 140 ամեակը կը նշենք, Խ. Աւետիսեան, Ռուբէն Ալլունեան եւ ուրիշներ: Ներկաները ջերմ ծափերով արտայայտեցին իրենց գոհունակութիւնը երգչախումբի ներդաշնակ կատարումներու կապակցութեամբ: Այստեղ նշելու է նաեւ խմբավարին տարած համերգատար աշխատանքը երգերը ճաշակով մատուցելու առնչութեամբ, ինչպէս նաեւ դաշնակահար Աննա Բէշիշեանի փայլուն նուագակցութիւնը, որ մեծապէս կը նպաստէր երգերու

տպաւորիչ կատարման: Կարճ դադարէ մը ետք բեմ բարձրացան «Կռունկ» երգչախումբի անդամները, խմբավարութեամբ տղթ. Եղարթ Թորիկեանի ու դաշնակի ընկերակցութեամբ Թամար ասապեանի: Տղթ. Թորիկեան իր գոհունակութիւնը յայտնեց այս միացեալ համերգի կայացման առթիւ, նշելով թէ մեծ սիրով ընդառաջած էին Դամասկոսի Հ.Կ.Մ. «Քնար» երգչախումբի հրաւերին յաջողցնելու այս համերգը, մասնաւոր որ երկու երգչախումբերու հիմնադիր՝ հայր Կռանեանը միշտ աշխատած է ու կը ուղղած է միակալու: Տղթ. Թորիկեան յայտնեց թէ այս համերգը երախտագիտութեան արտայայտութիւն մըն է Կռանեան վարդապետին իր 80 ամեակի առթիւ: Եւ այսպէս որպէս առաջին երգ երգչախումբը խոր ապրումով կատարեց «Ան երանելի Իզնա-տիս Մալոյեան» երգը որու բառերու հեղինակը հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեանն է ու երաժշտութիւնը յօրինած է Տղթ. Ե. Թորիկեանը: Մենթորի բաժնը յաջողութեամբ կատարեց Աւետիս Ազրապեան: Այնուհետեւ ներկաները առիթը ունեցան վայելելու «Կռունկ» երգչախումբի որակաւոր կատարումը շարք մը հայկական արաբական եւ այլ լեզուներով երգերու, որոնք բարձրորակ դաշնակահարով կատարած էր Տղթ. Թորիկեանը: Լսելի դարցան յաջորդաբար «Կապոյտ Մանուշակ», մենակատարութեամբ՝ Անայիս Կետիկեանի ու Հրատ Պէպեճեանի, «Պիկնիկ», «Սուք Ան Լուրիէ Լըպէրոյթ», Con te partiro, Hommage a Edith Piaf Ֆրանսերէն երգաշարը եւ վերջապէս մայրաքաղաք Երեւանի մասին ցեղեցիկ երգերու շարք մը: Ներկաները մեծ խանդավառութեամբ ծափահարեցին ու ցնահատեցին խմբավարի, դաշնակահարի ու երգիչներու արտայայտիչ երանցաւորումներով ու վարպետութիւն պահանջող երգերու փայլուն մեկնաբանութիւնը:

Համերգի կիզակէտն էր «Քնար» եւ «Կռունկ» երգչախումբերու միացեալ կատարումը 2 երգերու: Բեմին վրայ «Քնար»-ի անդամները միակալով «Կռունկ» երգչախումբին միասնաբար կատարեցին Տ. Մանուրեանի երաժշտութեամբ ու Եղիշէ Չարեանի խօսքերով «Ես իմ Անուշ Հայաստանի» խորհուր երգը խմբավարութեամբ Շանթ Բէշիշեանի ու դաշնակի ընկերակցութեամբ Աննա Բէշիշեանի եւ ի վերջոյ հնչեց Եղարթ Թորիկեանի երաժշտութեամբ ու Շահանդուխտի խօսքերով « Երգ Պահանջատիրութեան»-ը որ կատարուեցաւ խմբավարութեամբ Տղթ. Թորիկեանի ու դաշնակի ընկերակցութեամբ Թամար ասապեանի: Սքանչելի երգ, որ ճարտարօրէն ներկայացուց հեղինակը ու երգի «միակնք հայեր» կոչով վերջ գտաւ համերգը ներկաներու ծափերու տարափին տակ:

Սարգիս Բէշիշեան բեմ հրաւիրեց Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեանը եւ ձեռամբ գերապայծառ տիրոջ յոբելեարին յանձնուեցաւ Հ.Կ.Մ. «Քնար» երգչախումբի կողմէ յուշանուէր մը ծննդեան 80 ամեակին առթիւ, ապա տղթ. Թորիկեանն եւ Սարգիս Բէշիշեանը փոխանակեցին յուշանուէրներ երկու երգչախումբերու անունով, մասնաւոր պատրաստուած այս առթիւ: Հայր Կռանեան կարճ խօսքով մը կոչ ուղղեց առողջ մրցակցութեան ու մարդեց կեանքի արժեւորում երկու խումբերու: Այսպէս աւարտեցաւ երգի այս փառատօնը որ անկայման անհնչելի պիտի մնայ երկար ժամանակ՝ ներկաներու ու կատարողներու յիշողութեան մէջ:

ՀԱՅ ԱՄԵՏ. ԳՈՒԼԵՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ»-ՈՒՄՆ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, 9 Մայիս 2009-ին կէսօրէն ետք խանդավառութեան մթնոլորտ մը կը տիրէր Հայ Աւետ. Գոլէճին ընդարձակ բակերէն ներս: Այդ օր տեղի կ'ունենար Հայ Աւետ. Գոլէճի կազմակերպած «Միջազգային Օր»-ը, որուն կը մասնակցէին Լիբանանի գրօսաշրջիկութեան նախարարութիւնը եւ Լիբանանի մօտ հաստատուած 20 երկիրներու դեսպանատուներ՝ Հայաստան, Ալճերիա, Պենին, Պրագի, Պուլկարիա, Կիպրոս, Եգիպտոս, Հնդկաստան, Ինտոնէզիա, Քուէյթ, Մալեզիա, Մեքսիք, Մարոք, Նիճերիա, Ֆիլիպին, Ռումանիա, Ռուսիա, Սրի Լանքա եւ ԱՄՆ:

Այցելուները նախ առիթը կ'ունենային դարձիկ շրջափակին մէջ գտնուող գանգաւ երկիրներու կայքերը այցելելու եւ տեսնելու հոն ցուցադրուող իրերը: Ապա ժամը 4:30-ին լիբանանեան քայլերգը ազդանշան տուաւ ձեռնարկին սկզբնատարութեան: Ներկաներուն մէջ էին պետական նախարար Ժան Օղասապեան, Հայաստանի հաստատարատարը՝ Ռուբէն Խարապեան, Եգիպտոսի, Ինտոնէզիոյ, Ֆիլիպինի, Սրի Լանքայի դեսպանները, Պենինի պատուոյ հիւպատոսը եւ մնացեալ երկիրներու դեսպանատուներու մեծ մասին մշակութային կցորդները կամ ներկայացուցիչները: Քայլերգէն ետք օրուայ հանդիսավար Հ.Ա.Գ.-էն շրջանաւարտ Վաչէ Ալվազեան բեմ հրաւիրեց գոլէճի տնօրէնը ղոկտ. Զատէն Մարրիեան բացման խօսքը քնելու: Ան անդրադարձաւ ձեռնարկի նպատակին եւ բարի գալուստ եւ բարի վայելում մտայնեց բոլորին:



Պենինի սեղանը կեդրոնը հիւպատոս Պր. Արա Վանկեան

Խօսքէն ետք սկսաւ մասնակցի 20 երկիրներէն 18-ի կողմէ ազգային տարակներու ցուցադրութիւնը՝ իւրաքանչիւր երկրի ազգային քայլերգի նուագակցութեամբ: Ապա բեմին վրայ իրենց ազգային պարերով հանդէս եկան Լիբանան, Հայաստան, Պուլկարիա, Նիճերիա, Ռուսիա, Սրի Լանքա եւ Պենին՝ մեծ հետաքրքրութիւն ստեղծելով: Իսկ Ինտոնէզիա իր երաժշտական յատուկ գործիքներով ու նուագով:

Կրկին բեմ բարձրանալով տնօրէն ղոկտ. Զատէն Մարրիեան շնորհակալութիւն յայտնեց մասնակցի երկիրներուն, ձեռնարկը իրենց ներկայութեամբ պատուող նախարարին, դեսպաններուն, հիւպատոսներուն եւ մշակութային ու այլ կցորդներուն, ինչպէս նաեւ ձեռնարկի կազմակերպիչ՝ Յասմիկ Տեմիրճեանին, այս վերջինիս յանձնելով ծաղկեփունջ մը: Ապա տնօրէնին հրաւերով ներկայները եղան վարի բակը ուր ճոխ պիսիք պատրաստուած էր մասնակցի երկիրներու ազգային կերակրատեսակներով եւ անուշեղեններ, որոնց վրայ ծնողաց կողմէ տրամադրուած լիբանանեան եւ հայկական համադամ ուտելիքներ արեցած էին:

Այս իր տեսակին մէջ եզակի, լաւ կազմակերպուած յաջող ձեռնարկ մըն էր, որուն անդրադարձաւ նաեւ հետաետիլը:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ 35-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ



AUB-ի կազմակերպած ժողովրդային պարերու 35-րդ փառատօնը տեղի ունեցաւ Կիրակի, 10 Մայիսի երեկոյան ժամը 6:00-ին "Green Field" մարզադաշտին վրայ:

Այս փառատօնին իրենց մասնակցութիւնը բերին 17 տարբեր վարժարաններու պարախումբեր, որոնք ներկայացուցին 10 երկիրներու պարեր:

Այս 17 վարժարաններու կարգին էին 5 հայկական վարժարաններ, որոնցմէ չորսին պարուստը, օրդ. Հրոյի Գալայճեան՝ 15-րդ տարին ըլլալով հանդիսատեսներուն կը ներկայացնէ հայկական պարարուեստը՝ Հայաստանի եւ Արցախի դրօշակներով:


Հայ Աւետ. Գոլէճի պարախումբը ներկայացուց «Նագան Իմ Եարը» երգը: Յատկանշական էր Հայ Աւետ. Գոլէճի պարի ընթացքին Ա.Բ.Գ.-ի խորհուրդով գծագրութեամբ պատրաստուած պատասաը:

Պարուստը՝ միշտ իր մտքին մէջ ունեցած է կարելի եղած չափով հայկականը ներկայացնել օտարներուն: Հստակ Գարակեօզեանի պարախումբը ներկայացուց "Rock And Roll" ատերիկեան պարը, Թոնտը քոյլը ներկայացուց "Saloma" լատիական պարը, իսկ Չուարթնոնցի պարախումբը ներկայացուց "Sit Dance" ռուսական պարը:

Բոլոր պարախումբերը ներկաներուն գնահատանքին արժանացան, ի մասնաւորին՝ Չուարթնոնցի խումբը: Անոր աշակերտները յաջողեցան իրենց կարելի ընել գոհացնելու համար ներկաները, որոնք զարմանքով ու հետաքրքրութեամբ հետեւեցան անոնց ելոյթին:

ԵՐԵՐ ՕՐՈՒՆ ԸՆԹԱՅԵԻՆ, ԵՐԵՐ ՀԱՍԵՐԳ

Ա շ խ ա թ ի ա - հռչակ երգիչ Շառլ Ազնաւուր, Մայիս ամսուան առաջին շաբաթավերջին, յաջորդական երեք համերգներ տուաւ Լիւ Եորթ Սիթի Սենթրոլ համերգասրահին մէջ: Երեք համերգներու նախօրէին տոմսերը սպառած էին: Շատեր սրահին դուրսէն լսեցին Ազնաւուրի ձայնը...: 85-ամեայ Ազնաւուր, բացի ֆրանսերէնէ, նաեւ երգեց սպաներէն, իտալերէն, արաբերէն, ռուսերէն եւ թակաւաբար հայերէն:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի հետեւումս մեր նախորդ հաղորդագրութեան այսու կը յայտարարեմք, թէ հաշիկ Պապիկեան Հրատարակչական հիմնադրամի յանձնախումբը կը շարունակէ իր գործունէութիւնը՝ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետին:

Յանձնախումբի անդամներն են՝ տեարք Երուանդ Փամպուրեան (Լիբանան), Շահան Գանտահարեան (Լիբանան), Կիրո Մանուէլեան (Հայաստան), Հայկ Օշակեան (Արեւելեան Ա.Մ.Ն.), Կարո Մովսէսեան (Արեւմտեան Ա.Մ.Ն.):

Հիմնադրամը վերջերս հրատարակեց տիար Կարէն Խան-լարեանի «Հայ Բնակչութեան Եթևոկրօնական Վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.)» աշխատասիրութիւնը, գոր կարելի է գտնել կայքէջի կրթարտահան գրատան մօտ: Սոյն գործին անգլերէն թարգմանութիւնը ընթացքի մէջ է եւ լոյս պիտի տեսնէ ընթացիկ տարուան մէջ:

Յանձնախումբի տրամադրութեան տակ կը գտնուին որոշ թիւով գործեր, գանազան լեզուներով, որոնք յաջորդաբար պիտի հրատարակուին յառաջիկայ ամիսներուն:

Հիմնադրամը պատրաստ է ընդունելու նոր գործեր՝ ուսումնասիրութիւններ եւ կամ ուսանողական ամառայիններ, որոնք առնչուած են Հայ Դատի, հայ քաղաքական մտածողութեան զարգացման կամ հայ ժողովուրդի բռնագրաւուած իրաւունքներուն:

Ներկայացուցելիք աշխատասիրութիւնները պետք է լղել հետեւեալ հասցեին.

Khatchig Babikian Publication Fund
Armenian Catholicosate of Cilicia
P.O. Box 70317
Antelias, Lebanon
E-mail: chancellor@armenianorthodoxchurch.org
Fax: +961-4-410002

ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԼԵՆ ՅՈՎԻԿԱՆԵԱՍԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ...

Միացեալ Նահանգներու տարբեր քաղաքներու մէջ այս օրերուն տեղի կ'ունենան ամերիկահայ անւանի երգահան Ալեն Յովհաննէսի ծննդեան 100-ամեակին նուիրած հանդիսութիւններ:

Գեղարուեստական, մշակութային հանդիսութիւններուն զուգահեռ նախատեսուած է նաեւ վազքի մրցանք մը:

